

ԹՐԻՎԱԿԱՆ ՎԱՐՔԵՐԸ ՅԻՒԱՆԴԻԱՅՈՒՄ

(Հայ Տուրիստի դիտողութիւններ)

Նուիբուում է պրօքեսու Վ. Վարդանեանին,  
որ նպաստեց ինձ երկրորդ տնօգամ Ֆինլանդիա զնայու  
և ապա խրախուսեց «գրի առնել դիտողաբիւնեա»՝  
օրինակ ատլու թիվերնեիս, որոնք աւրիմեռավ ապրամ  
են Պիետրուրգամ եւ չնեն նետաքրեւում, թէ ի՞նչ կայ  
մայրաքաղաքից 52 զերս այն կողմը»:

U.

1913 թուի մայիսի վերջին ինձ յաջողութեց երկրորդ անգամ այցելել զբանիտի և ճերի վրայ պահպանուող ինքնավար ծայրադաւառը.—Ֆինլանդիան ինձ շատ էր հետաքրքրում, և ես ամեն առիթից օգտվում էի, երբ լինում էին արձակուրդներ, հեռանալու Պևսնիքուրգից դէպի հիւսիս, դէպի աւտոճամոմ Ֆինլանդիան՝ նրան մօտիկից ճանաչելու և իմ հայրենիքս երազելու.—Ծուսաստանի մայրաքաղաքի ժողորի մէջ անհնար է այդ, իսկ առանց դրան անբռնվագակ է իմ մասած ողութիւնը:

Այս շարադրութիւնս չի լինի նոտիքուած ամբողջապէս մինչ-  
լանդիային, ևս այստեղ կը խօսեմ միայն օրթոգրաք երկու մենաս-  
տանների՝ կօնսեց-ի և Վալասամի մասին։ Յիշուած արկու մենաս-  
տաններն էլ գտնվում են առանձին կղզեակների վրայ, որոնք կրու մ  
են մենաստանների անունը։ Լագոժեան լճի հիւսիս-արեմտեան մա-  
սում, ափին մօտիկ, Ֆինլանդիայի սահմաններում դրուած են շատ  
մանր կղզիներ, որոնցից մի քանիսի վրայ ջերմնառնդ հաւատա-  
ցեալները մատուուներ և վանքեր են կանգնեցրել, իսկ երկուսի վրայ  
կան մեծ, բազմամարդ մենաստաններ—կօնսեց և Վալասամ, սրանք  
պատկանում են Վիբորգի նահանգին։ Ես կտամ յունացաւան այս  
երկու ոռուսական վանքերի նկարագիրը, հեռու մնալով պատմու-  
թիւնից և ընթերցողներիս ըստ կարել ոյն յատակօրէն պատկերաց-  
նելով ինձ։

६४

Պետերբուրգից Կոնսեց և Վալասամ՝ կարևի է գնալ երկու ճառապարհով. մէկը՝ Արկածուզով Վիբորգի և Սերտօզի վրայով, իսկ միւսը՝ չողենաւով Նեսայի վրայով, Շլիսելբուրգի մօտով, Ես ըստ-

բում եմ վերջինը, որ նոր էր բացուել — (ձմեռը նաւագնացութիւնը դադարում է). մայիսի 18-ին սառոյցից հազիւ էր ազատուել Նեան և Լաղօծեան լիճը, և շոգենաւը պէտք է անէր իւր առաջին ուչյու:

Կալանիկովի գետափում, ու, Բօրիս և Գլէբի եկնզեցու մօտ գանուում է վալաամի նաւահանգիստը՝ գերանների մի հիւսուածք, շոգենաւի մի դիւրաշարժ կայան։ Առաւօտեան ժամը 10-ն է. մէկ ժամ յետոյ մեկնելու է շոգենաւը. նաւահանգիստ են լցուել բազմաթիւ ուխտաւորներ և սրանց ճանապարհողներ. նրանք զիլսարաց շարուել են նաւահանգստի կենդրուում կանգնեցրուած պատկերի առաջ, որ վառուած մոմերի մէջ անտեսանելի է դառնկ. մի վանական բարձրաճայն աղօթք է կարդում — նաւագնացութեան բացման առթիւ մաղթանք են կատարում, գորունակութիւն են յայտնուած Արարաջին Յս մօսենում և կասային, սեաներ վանականը տալիս է տոմսակ և հետն էլ վալաամի համառօտ նկարագիրը Երկը անգամ սուլելուց յետոյ շոգենաւը բաժանվում է նաւահանգստից. սկզբում գնում է քիչ յետ, ապա արագօրէն առաջ է լոգում. Բոլոր ուղեսորները բարձրացնել են մայթի վրայ և հրաժեշտ են տալիս մեացողներին. շատերը թաշկինակներն են ճօսում ու ժպտում, մի խումբ, մեծ մասամբ կանայք, մի վանականի զիլսաւորութեամբ ժողովներ են մայթի եւսին մասը և Տիրամօր պատկերի առաջ աղօթք են կարդում, անփորձանք տեղ հասնելու և իրենց փափագները կատարելու խնդրանքով. — իսկ մայթի առաջի մասում հինգ-վեց երիտասարդ վանականներ բարձր ձայնով հոգեսր երգեր են երգում. Նրանցից մէկը ընկերների մէջ տեղը կանդնած երկու ձեռքով անդադար շարժումներ է անումն չափ է տալիս. երկակայելով իրեն խմբապետի գերում. — կարծանասակ ծերունի փին նաւագնետը կանդնել է վերին յարկի իւր սենեակի դռանը և ելեքտրական մեքենայի միջոցով անդադար ուղղութիւն է տալիս շոգենաւին և խրոխտ հրամաններ է արձակում ստորագրեալ նաւաստիներին, որոնք բոլորն էլ փին են, ՚՚ին դուրս չենք եկել Պետերբուրգից. մակոյլիները և շոգեմակոյիները վիստում են Նեայի վրայ. շատ են և բեռնակիր սե շոգենաւերը, որոնք իրենց ետեից քաշում են մի քանի հսկայական նաւեր, ծանրաբեռնուած փայտով, աղիսով և այլ ապրանքներով:

Կամաց-կամաց գուրս ենք գալիս մայրաքաղաքից: Նեայի ափերը ստանում են կանաչ գոյն. վերջանում են արուարձաններն եւ և սկսվում են ամառանոցները. նրանց հետ խառը ցրուած են մեծ դորձարանները, որոնց ծխնելոյզները ծառների և շինութիւնների միջից ուղղաձիգ բարձրանում են վեր և կարծես չեն վերջանում՝ նրանց բերանից դուրս է զալիս թանձր, մութ ծուխը և բազմաթիւ ու բազմապիսի քուլաններս երկինքը միացնում է երկրի հետ. Տեղանքում զիտեղ կառուցուածքներ և նրանց առջնը

թեթև նաւահանգիստներ։ Մեր շոգենաւը սկսում է արագացնել իւր ընթացքը և առանց երերախու սահում է կանաչ անտառի զուգահեռ սական պատճենների միջով։ Գետափը ստանում է անորոշ կերպարանք, թողնում է կանաչ ժապաւէնի տպաւորութիւն և անդադար յետ է ժագում և ոչ մի հաճոյք չի պատճառում երկար դիտողին իւր տեսքով։ Ես յոզնում եմ այդ անորոշութիւնը դիտելուզ և հայեացքս դարձնում եմ չոգենաւի մէջ՝ իմ ուղեկիցներիս։ Ներանք արդէն տեղաւորուել են նստարանների վրայ։ մի մասը մտել է կայուտանները, բաժանուել են իմբերի և գրոյցի հն բռնուել։ Նաւով երկար ճանապարհ զնալիս շատ հեշտութեամբ ծանօթութիւն կարելի է կապել Խօսակցութեան պահանջը և հարեւանի վհճակով հետաքրքրուելը մի անդիմադրելի ցանկութիւն է, որ ունին բոլոր առողջ մարդիկի. միայն որոշ տիպի խստակեաց ճգնաւորներն են, որոնք ուխտել են լուս ու մունջ անցկացնել իրենց կեանքը և ոչ ոքի ոչ մի խօսք լսելի ձայնով չասել։ Մեր նաւում չկան այդպիսի լուսկեացներ։ Անա մէկը մօտենում է ինձ, կեցտոտ չորերով, տանջուած դէմքով ու շատ հին զլիարկով. վայելչութեամբ բարեւում է և տեղեկանալով, որ ես էլ եմ գնում Վալաամ, սկսում է պատմելի Պատմում է, թէ ինչպէս ինքը ուխտի է զնացել այդ մենաստանը, մնացել է այնտեղ շարաթներով, օրինակ է վերցրել վանականների ժուժկալ, առաքինի կենցաղից, մի առ ժամանակ օղին և հարբելը վերացել է. կազդուրուել է հոգով. ամբացրել է իւր կամքը, բայց այդ երկար չէ տեսել. այժմ նա վերստին ստիպուած է Վալաամ այցելել՝ հոգեական հանդստառնալու, սրբերի մասունքներին երկրպագելու և վանականների հայրական օրհնութիւնը և բժշկութիւնը առնելու Շատերն են դնում Վալաամ այս նպատակով։ Կօնենցում և Վալաամում օղի և այլ ողելից խմբիներ ու ծխախոտը խստիւ արգելվում են. եթէ մէկի մօտ օղի տեսնեն և կամ նկատեն ծխելիս—իսկոյն դուրս են անում կղզուց և տուգանք վերցնուել։

—Իսձ նման բնաւորութեամբ թոյլ մարդկանց համար այդ խստութիւնները օգտակար են. և ես շուտ-շուտ Վալաամ եմ գալիս՝ ինձ մաքրելու և բժշկելու. —ասաց իմ խօսակիցը։

Նա պատմեց ինձ իւր ամբողջ կեանքը յիշեց բոլոր մանրաս մասութիւնները՝ խրախուառած իմ ուշադրութեամբ և հարցեռով. —մանր խանութպան է. հօրից ստացել է մեծ ժառանգութիւն. վատնել է. ամուսնացել է մի անգամ, կինը թողել է նրան, տեսնելով որ հարբում է. այժմ քրոջ որդիներն են խանութը կառավարում, իսկ ինքը մենաստաններն է ման գալիս այն յուսով. թէ կը կարողանայ ազատուել ախտից։ Խօսում էր այնպիսի մի տոնով, որ կարծես ինձանից էր սպասում իւր շաւերի բուժումը։ Մենք

Էլի խօսեցինք: Ես հետաքրքրվում էի այս մարդու վիճակով. նա մի անհատ չէ, եղակի իր զոյութեամբ, այլ նա մի ամբողջ գասակարգի ներկայացուցիչ էր իմ աշխուժ—կիսակիրթ, թող բնաւորութեամբ շահապործման ենթարկուող, մոլութեանց ընդունակի Մայրաքաղաքի մասր վաճառականութեան մի ախալի պատկերացնողն է, որ շատ ընդհանուր դժեր ունի բանուրութեան և դիւզացիութեան հետ, անհաստատ և անկայուն բարոյական դաստիարակութեան չնորհիւ սա հեշտութեամբ դո՞ն է զնացել հրավուրանքներով լի կեանքին, միակ միսիթարութիւնը, որ ամբողջապէս պատում է սրանց՝ կրօնական զգացումն է. Նրանք վերջինում են հին մտապատկերները և իրենց խիղճը հանգստացնելու համար ուխտագնացութիւն են կազմակերպում, մենաստաններն են այցելում:

Մեր ուշադրութիւնը դրաւում է մի վանական երկար մազերով և մօրուքով, սեացած դէմքով, մէջքին մի մեծ պարկ կապած և կողքին մի պայտասակ կախած, զլուխը բաց և ոտները բորիկ. կրծքին՝ «Միքայէլ Հրեշտակապետի» ընկերութեան նշանակը կը ուցրած Այս վանականը որսաց մեր հայեացքը և մօտենալով մեղ հարցրեց թէ ժամը քանիսն է և ապա սկսեց մեզ հետ խօսել. շատ տերը կան նրա պէս և բոլորը ուխտել են բաց զլխով և բորիկ ոտներով ուռսական բոլոր մենաստանները այցելել, ինչու, անշուշտ կրօնական զգացումն է այս բոկոտն և գլխարաց մարդկանց մզում դէպի վանքերը, ջնրմ հաւատը և ցանկութիւնը՝ փառաքաննել Արարէին նրա ստեղծագործութեան տարրեր անկիւններում, նրան երկրպագել մի շաբք սրբերի և մարտիրոսների մօտ Բայց այս մարդիկ բացի յիշուած հակումներից ունին և այլ հակումներ՝ ապրելու, դիւրին ապրելու, քիչ աշխատելու, լաւ վայելու, նորութիւններ անմնելու, միակերպ կենցազից գուրս գալու, այլազանութիւն տեսնելու և զդալու: Այսպիսի մի մեծ խումբ մարդիկ կան, որոնց համար հօջենու ու մոհացու քայլու կատարելու դառնել է մի տհասակ զործ, որով կարելի է զոյութիւն պահել, հարուստ են սուսական վանքերը և հիւրասէք, եկած ուխտաւորներին օթեան և սնունդ են տալիս, երբեմն էլ զրամ: Մեր խօսակիցը յայտնեց, որ նա իւրաքանչիւր մենաստանում մնում է երկու շաբաթ, խոստվանուում է, ճաշակում, այդ նպատակների համար մեծ խնամքով պահում են վանքերում, իսկ եթէ երկու շաբաթը անցաւ՝ աշխատելու են ուղարկում վանքապատկան կալուածքներում և վարձատրում են աշխատանքի համար: Ընտանիքից և վաթանից զուրկ այս մարդիկ, որոնք չեն ճաշակել հայրենիքի քաղցրութիւնը և վազվում են այնտեղ, ուր հեշտութեամբ և առանց

գլուխ ցաւեցնելու հաց են տալիս—մենաստաններն նն իրենց հայ-  
քենիք դարձրել։ Լայնածաւալ և բազմաչերտ Ռուսաստանում դար-  
մանալի և դիսօնանս չը պէտք է երնան այս մարդիկ։

## Դ.

## Մօտենում ենք Ծլիսսելբուրդին։

Սա մի գուռառական քաղաք է, գտնուում է Լաղօժեան լճի  
ափին, այստեղ, որտեղից դուրս է գալիս Նեսան Երկը ժամուայ մէջ  
մենք անցնուում ենք ամբողջ Նեսան, այդքան կարծ է նա, ընդամենը  
60 վիրսու ժամը 2-ին մենք անցնուում ենք Ծլիսսելբուրդը, առանց  
քաղաք մանելու, միայն քիչ կանց ենք առնուում՝ նաև է մանուում  
մաքսատան մի պաշտօննեայ և թեթև խուզարկութիւնից յետոյ իւր  
մակրոյիով վերադառնուում է քաղաք և մեզ առաջ գնալու իրաւունք  
տալիս—Այստեղից ակտում է մինդանդիան, որ շատ բանով նման  
չէ Ռուսաստանին. միայն ընդունում է Խուզաց կայսրի գերիշաւ-  
նութիւնը, անուանելով Ներան Մեծ իշխան Ֆինլանդիայի, ներբին  
գործերում մինչև անդիան բոլորովին անկախ է, ունի իւր սեփական  
դրամը, որէնքները, դատարանը, Այդ պատճառով իւրաքանչիւր  
նաւ, որ Ֆինլանդիա է մանուում և կամ երկաթուղու իւրաքանչիւր  
գնացք, որ Պիտերբուրդից Վիբորգ է մենքում և կամ հակառակը—  
Ֆինլանդիայից դէպի Ռուսաստան է գալիս՝ սահմանագլխին, Ծլիս-  
սսելբուրդում ենթարկուում է խուզարկութեան, եթէ գտնեն ապ-  
քանդներ՝ Ելլ գրաւեն և կամ մաքս կը վերցնեն, ճիշտ այնպէս,  
ինչպէս Տաճկաստանից Ռուսաստան անցնելիս և կամ հակառակը։

Մեր շոգենաւը մանուում է Լաղօժեան լիճը։

Ծլիսսելբուրդը մնում է մեր ետեւում, բայց ես և Հոգենեար-  
դարանական ձեմարանի ուսանող ընկերներս երկար նայում ենք  
այս աննշան քաղաքին, որ յայտնի է միայն իւր բերդով, այդ բերդը  
գտնուում է քաղաքին մօտիկ, լճի մէջ Օքչօօ փոքր կղզու վրայ,  
որ ամրողջապէս պատած է բարձր պարիսսովով։ Այս բերդը կորցրել է  
այժմ իւր սազմական նշանակութիւնը, բանտի է փոխուել, կան-  
գուն են սպիտականերկ հաստ պարիսսաները, որոնց ետեւում երեսում  
են կարմրաներկ թիթեղէ կտուրներ և մի բարձր աշտարակ, զի-  
շերները այնտեղ լավտեր են դնուում, որովէտ փարոս Ծլիսսելբուրդը  
քաղաքական յանցաւորների պատժարանն է։

## Դ.

Մոայլ է Կօնիեց և Վալասամ մենաստանների աշխարհագրական դիրքը. 1,070 վերստ չրջագիծ ունեցող լիճն է այս մենաստանների չրջապատզը, պաղ քամիներն են մշտական հիւրեր, որոնք իրենց ներկայութեամբ չարաթներով լիճն են ալեկոծում և նաւագացութիւնը անհնար դարձնում:

Լադօֆեան լիճը, ինչպէս ամեն փակ ջրամբար, չրջանաձև հոսանք ունի և դիւրութեամբ ենթարկվում է միջնորդութիւնութեան: Եւրոպայի ամենամեծ լիճն է սա, բայց և ամենավանգաւորը: Յաճախակի փոթորիկների երկիւղից ապրանքատար նաւերը սակաւ են լողում այս լիի վրայ: Ապահով հաղորդակցութեան համար կառուցուած են ջրանցքներ, որոնք զուգընթաց ձգուում են լճի հարաւային եզրին, սկսուում են նեայից և շարունակուում են մինչև վոլխով, այցպիսով Վոլգան միացնում Նեայի հետ, մի քանի տեղ այս ջրանցքները կրկնակի են և ընդհանուր առմամբ մօտ 200 վերստ երկարութիւն ունեն: Այս ջրանցքները նուազեցրին ապրանքատար նաւերի երթեեկութիւնը լճում: Ամառուայ չորս-հինգ ամիսների ընթացքում, երբ լիճը ազատ է սառոյցից, Պետերբուրգ, Վալասամիր, Կելսուումի և Սերգորովի միջն միջտ երթեեկում են մարդատար չուգենաւեր, որոնք օժտուած են նորագոյն բոլոր յարմարութիւններով և պաշտպանուած են հնարաւոր փունդներից: Մեր շոգենաւը, որ Վալասամ մենաստանի սեփականութիւնն է, ունի անթել հեռագրի յարմարութիւն և ուրիշ նորաձեռութիւններ:

Այսօր լիճը համեմատարար հանգիստ է, կան ալիքներ, բայց զրանք ոչինչ են մեր ծանր շոգենաւի համար: Լճի երեսին, տեղ-տեղ երեսում են շարժական փարոսներ, որոնք ուղղութիւն են տալիս նաւերին: կան և կայուն փարոսներ,—բարձր աշտարակներ, կանգնանցրուած լճի միջից ցրուած ժայռերի կամ փոքր կղզիների վրայ: այս մեծ փարոսների մէջ ապրում են հինգ-տասը փին պահապաններ, որոնք և պէտք եղած դէպքում օգնութեան են հասնում նաւերին, նրանք իրենց մօտ ունեն անհրաժեշտ պիտոքներ, նաւակներ պարաններ և այլն, որոնք շարուած են սպիտակ բրդած շինութեան մէջ, հեռուից այդ շինութիւնը ձեան մեծ բլուրի է նմանուում:

Մեր շոգենաւը՝ անդադար՝ հեռանում է յամաքից և խորը մտնում լճի մէջ, ցամաքը կորչում է մեր հորիզոնից, համաօիփուռ ջուրն է շրջապատում մեզ. Աչքը ոչինչ չէ տեսնում բացի ջրի հարթ մակերեսոյթից . . . ամեն անդամ, նրբ եւ ճանապարհորդում եմ ծովով և հարաշարժ ջուրն եմ տեսնում իմ չուրջո, ինձ պատում է մի անբացառելի զգացում սարսուորի հետ միասին. ինձ թռում է, թէ համատարած այս ջուրը նենդ դաւադրութեամբ գրկախանուուել է երինքի հետ. և այս երկուսը ներկայացնում են ինձ որպէս մի հոկտական վիշտայ, լայն բացած բերանով, անհամար ատամներով և մշտաշարժ լեզուներով . . . երբ երկար նայում էի ծովի ալիքներին ու լուսմ նրանց աղմուկը—ծովը կարծեն չունչ էր առնում և անթիւ շրթունքներով իմ ոչնչութիւնը ծաղրում, սարսափելի է այս ծաղրը . . . ևս անկարող եմ ծովի նեցնանքին պատասխանել, աւելի շատ եմ ընկնծուում և ճնշուում. պարզ, անդուրեկան քամի է սկսուում և ես իջնում եմ ներքեա՝ կայուտայում երեսակայութիւններս հանգըստացնելու, վախ ազդող մաքերս մոռանալու—Ժամը մասնէ. մի վանկանի իմադրում ենք մեզ թէյ տալ. (շնդենաւի բռնֆէտը վանականների ձեռքն է). և միասին ճաշում ենք, ապա քիչ հանգստանում ենք: Ինձ զարթնեցնում են ճանապարհորդների խմբական երգեցողութիւնը. մօտեցել էինք կոնսեցին, գոհարանական աղօթք էին կարգում և կրօնական երգեր երգում:

## Ե.

Կոնսեց մենք հասանք երեկոյեան ժամը 8-ին. լոյս է. ասպիտակ դիշերների շրջանն է: Շոգենաւը կանգնում է կզզու մի խոռոչի մէջ. դուրս ենք դալիս նաև ահանգիստ. մեզ գիմաւորում են կոնսեց մենաստանի ներկայացուցիչները և առաջնորդում են դէպի վանական հիւրանոցը. շտապում ենք այնտեղ և երկու սենեակ ենք վերցնում—մէկում տեղաւորուում ենք չորս ուսանողներս, միւսում երեք ուսանողները Առաջին տպաւորութիւնը շատ լաւ էր. հիւրատանը կատարեալ մաքրութիւն էր երկյարկանի մի գեղեցիկ չենք. զոների մօտ կանգնած էին հերթապահ վանականները հայր հիւրընկալի հետ. ինչպէս առաջին յարկում, նոյնպէս և երկրորդ յարկում ընդդարձակ կօրրիդօրի ուղղութեամբ ընկած են սենեակները. իւրաքանչիւրի դուան կպցրած է տափտակ և վրան զրած է սենեակի համարը. սենեակները տաք են, գմբեթաձև առաստաղով, մեծ լուսամուռներով. պատերին զուգանեռուական շարուած են չորս մահականներ, մաքուր և նոր հարթած սաւաններով, հաստ վերմակներով և երկու-երկու փափուկ բարձով. կայ մի սեղան, մի քանի աթոռներ, մի պահարան Սպիտակ պատերին ամրացրուած են

կրօնական պատկերներ, որոնք այնքան տարածուած են և շատ է ժամանականութիւնը:

Մենք մի փոքր հանգստանում ենք, դիտելով այս պատկերները. ապա դուքս ենք. գալիս կղզին ըրջագայելու. Մեզ ըսկերանում են և ուսանողուհիները. հիւրատան սպասաւորը խոստանում է սամովարը պատրաստել մեր վերագարձին. Վանականները չեն երևում. մտել են իրենց խցերը. զիշերն է սկսուում. ոչ արե կայ երկնակամարում և ոչ լուսնեակ, բայց սապիտակ է զիշերը. Հիւրատան առաջը մի պարտէղ կայ՝ ծառուղիներով և նստարաններով. Հիւրատանը սպասաւորով մի վանական սիրով յանձն է առնում մեզ կղզու նշանաւոր անկիւնները ցոյց տալու նախ մտնում ենք մենաստանի բանջարանոցները, ուր հանում են զանազան տեսակի կանաչներ, և մանում ենք անտառ. Բարակ և երկար են այստեղի ծառերը, որոնք ապացոյց են սեահողի աննշան շերտի և զրա տակը հանգստացող զրանիտի զանգուածների. ծառի արմատները խորը չեն կարող դնալ և քիչ անունդ են ստանում. նօսր է անտառը. մենք բարձրանում ենք մի թումբի վրայ, որի գագաթին երևում է մեկուսացած մի շիրմ. մօսենուում ենք ու կարդում. «Յիշիր ինձ, Տէր, երբ այցելս Յո եկեղեցին». իսկ տակը — «Իշխան նիկ. Խվ. Մանուելով, ծնուել է 1780, պահաճանուել է 1856 թ., մայիսի 3-ինց, թով է այս իշխանը և ինչու է թաղուած այս կղզում. մեր առաջնորդ վանականը չկարողացաւ պատասխանել և խորհուրդ տուեց առաւօտեան վանահօրը հարցնել և արխիւում իմանալ. Այս հեռաւոր երկրում մի աղջակցի շիրմ յայնագործելու մտքով միւս առաւօտ ևս վանահօր մօս գնացի, մաքուրմ Մանուէլովը՝ Մանուէլեան դաձնելով։ Բայց վանահայրը, որ անկարող էր արխիւր բանալի, միայն այն ասաց, ինչ որ ինքը լսել էր ծեր վանականից՝ — այդ իշխանը մենաստանի բարերարն է եղել և զանկացել է կղզում. թաղուել իմ կասկածները մնացին էլի կասկածներ. և ևս չիմացայ այդ իշխանի ով լինելու ինչու չը կարծել, որ տարաբախտ մի հայ իշխան, հայրենիքի դժողակ պայմաններից վանուած այս կղզին իրեն հայրենիք է դարձրել և հանգստանում է.

Վանականը մեզ ցոյց է աալիս մի մատուռ. երևում են վառուած մոմեր. մօտինում ենք, մեծ սպառամի մի կտոր, որի վրայ փայտեայ մատուռ է կանգնեցրած. մանում ենք մատուռ, մեր առաջնորդը պատմում է, որ այս մատուռը ունի առանձին հշտնակութիւն և կօնենցի մենաստանի ամենամեծ օրբութիւնն է — ապառաժը հնում եղել է կռապաշտ կօրենիերի (Փինլանդացիների մի ցեղը) դոհի սեղանը. տարին մէկ անգամ շրջակայ ազգաբնակութիւնը մի ձի է բերելիս եղել, ձիուն զոհում էին այս սպառամի վրայ, որպէս զի շար ոգիները չը վնասեն ժողովրդին. մորթօտուած

ձիերի զլուխները ամբացնում էին ապառաժին, դրա համար էլ այս ապառաժը կոչվում է «ԿՈՆԵ-ԿԱՄԵՆ» «Ճի-քար», իսկ ամբազչ կղզին ու մենաստանը՝ «օնենից»<sup>1)</sup>: Երբ Արաշնիյ ճգնաւորը հաստատուել է այս կղզում, (16-րդ դարում) չար ոգիները դեռ ապրում էին այդ ժայռի մէջ, պատմում են, որ ճգնաւորը աղօթել է ու սրբազն շրով թրջել ապառաժը, այդ ժամանակ նրա ծակերից զուրս են դալիս չար ոգիները և սև ագռաւների կերպարանքով թանում են դէպի մօտակայ Ֆինլանդական ափը, որտեղ այժմս կեկահօլմ քաղաքն է: Այդ գէպի առթիւ ապառաժի զագաթին շինուած է այս փայտեայ մատուոը:

Այդ մատուոից քիչ հեռու զանուում է «սուրբ աղբիւրը» (Святой колодецъ): Սա մի փոս է, մէջը ջուր կայ. ջրի մահերսոյթի վրայ փոռւած է երկաթէ թելերի մի ցանց, երեխ նրա համար, որպէսզի քարեր և այլ առարկաներ չընկնեն ջրի մէջ, այս ջուրը «հրաշագործ» է կոչուում: Երբ ես տեսայ այս աղբիւրը և լսեցի, թէ ինչպիսի հաւատալիքներ են կապսւած այս աղբիւրի հետ, որ բժշկում է հիւանդներին և այլն, իսկոյն յիշեցի վրացիների Զեղազէնի վանքը, որ գտնուում է Թիֆլիսին մօտ, Մցխէթի զէմը, սարի ծայրին, անտառի մէջ, այնտեղ եկեղեցու մէջ, քարերով շըրջապատուած խոռոչում ջուր կայ, որ չերեփներով խմում են հաւատացեալները և այցելուները: աղբիւրի վերել կպցրուած է մի տախտակ և զրած է «ՎՈԴՋԵՎՏՎԱԿՈՒՅՇԻ ԽՈՏՎԱԿՈՐԾ ՀՐԱԺԱՎԿՈՐԾ ԱՂԲԻՒՐ»:

Ապա մենք երկար զրօնուում ենք կղզու անտառի մէջ, մրցում ենք իրար հետ արագ վաղելում, ուժգնօրէն աշխատեցնուում ենք թրերս, զուրս ենք վանում նրանց մէջ մնացած մայրաքաջագի օղը և անտառի բուրմունքով ենք մի առ ժամանակ զմայլում: Դուրս ենք դալիս ափի Պարզ, զուլալ ջուր: օրա յօտակութիւնը և համը հային յիշեցնում է Գեղարքունեաց ծովը՝ Սևանայ լիճը: Զրի եղբին փոռւած է զրանիտի աւազ, բաց վարդագոյն, կարմիր և տարբեր արաւցոլում ունեցող բիւրեղներով զրանիտի այս ալիւրը մեզ չատ է հետաքրքրում: այնչափ մաքուր է այս աւազը և այնքան գեղեցիկ, որ ամեն մէկս մեր թաշկինակները լցնում ենք նրանով և աղա վերաբանում հիւրանոց՝ մեր սենեակը:— Սամովարը արդէն պատրաստ էր:

Հետեւեալ առաւօտը մենք մտնում ենք եկեղեցի, շրջում ենք անտառի մէջ ցրուած սկիտները, այստեղ երկու տեսակի եկեղեցի:

1) Մի ուրիշ վարիանտ կայ «Կոնեւեց» բառի մեկնութեան վերաբերուող, կղզում դտնուող ապառաժը միու զլսի ձեւ ունի, այդ պատճառով էլ ժայռին ծիրար են ասում, որից եւ սուացուել է կղզու անունը: Գ. Տ. Ա.

կայ, մեկը՝ ուստական սովորական եկեղեցին է, երբեմն երկյարկանի, ներքին յարկի եկեղեցին ծառայում է ձմեռը աղօթելու համար, այստեղ աւելի տաք է, իսկ վերին յարկի եկեղեցին, որ գտնաւում է ձմեռայինք միրայ և աւելի լուսաւոր է ու բարձր, ծառայում է ամառները աղօթելու, այս եկեղեցիներում ուխաւորները կարող են աղօթել առանց թոյլառութեան Բայց երկրորդ աեսակի եկեղեցիները՝ որոնք սկիբաներ ևն կոչուում—միայն որոշ օրեր են բաց ուխաւորների համար, այս սկիբաներում առանձնացիկ են սիփմօնախները, ծերացած և կամ մենակեցութեան սէր ունեցող երթառարդ վանականներ, որոնք ուրիշ պայմաններում գուցէ ճգնաւորներ, իւնէին, բայց Կօնսեցում և Վալաամում նրանք միայն սիփմօնախներ են, «մեզմ-ճգնաւորներ», եթէ կարելի է այսպէս անուանել նրանց, այդ մեզմ-ճգնաւորները օգտուում են մենաստանի տնտեսութիւնից, պահուում են իրենց հաւեր և այլ թոշուներ, միայն մարդկանց երես չեն ուզում տեսնել, մանաւանդ խորշում են կանանցից, միայն տարուայ, մէջ որոշեալ օրերին նրանք թոյլ են տալիս ուխաւորներին և կանանց ներս մտնել իրենց սկիբը, որի պարիսպի դաները ուրիշ օրեր միշտ փակ են»:

Կօնսեցի ամենամեծ սկիթն է «ԾՐԻՑ ՅԵԽԵ ՍՎԱՏԵԽԵ» (սկիթ բոլոր սրբոց), որ ունի մօտ 40 սիփմօնախներ, Ամբողջ Կօնսեց մենաստանում կան 280 վանականներ, գեռ չը հաշուած մոնթները (ոօլյափուել), որոնք սպասաւորում են մենաստանի շինութիւնների մէջ. հայերիս համար այս մենաստանը շատ մեծ կը թուայ, բայց Ռուսաստանի միւս մենաստանների հետ համեմատած Կօնսեցը սակաւամարդ վանքերից մէկն է, այլ բանէ Վալաամը, որին կը գառնանք մի փոքր յետոյ:

Կօնսեց մենաստանի անտեսութիւնը ամբողջապէս գտնուում է իրենց՝ վանականների ձեռքը, ալիւրը մեծ մասամբ գրսից են բերել տալիս, իրենց պատկանող կղզիներից, ստացածը չէ բաւականացնուում, վանականները առանձին խնամքով մշակում են բանջարանոցները, պարտէ զները, որոնց արգասիքներն և սպառում են, այս մենաստանում աչքի է ընկնում և կաթնաստեսական ֆերման, ուր կան 27 կթու կովեր, սևնեն սերզատ-(սեպարատոր)-բայց չեն օգտուում, գերազաւում են ճին ձեր՝ փոելը, Բացի կովերից կան և 12 ձի և 6 եղներ, այս անսառններով վանականները մշակում են իրենց գետինները,

Գ. Տէր Ռուբինեանց

(Նարունակելի)

1914, փետրուար.